Առնետների դեմ կրիվը կազմակերպումն զանազան միջոցներով՝ մեխանիկական, բակտերիոլոգիական: Վերջին միջոցն այն է, վոր առնետներին տալիս են հատուկ գրավչանյութեր, վորոնք նրանց մեջ առաջացնում են մասսայական հիվանդություն (համաձարակ), վորը կոչվում է մկան տիֆ: Բայց ամենից տարածվածը քիմիական միջոցն է, յերբ զանազան թուլներով վարակված գրավչանյութեր են տրվում (լուսածին, ստրիմնին, ածխաթթվակին բարիում, մկնդեղ և այլն):

Դրավչանյութերի համար ամենից շատ գործածվում է մկընդեղը: Այդ նպատակով մկնդեղը գործածվում է վոշի և հեղուկ դրությամբ:

Ամենից շատ տարածված գրավչանյութերը, թե իրենց հժանությամբ և թե տված արդիունքով, հետեւալներն են:

1. Վերջնում են մի որ առաջ թխված հացը, հանում են կեղեց, իսկ միջուկը մանր փշրում են: Պատրաստված փշրունքին ավելացնում են շաքար կամ շաքարավակ և բուսական յուղ, ապա ավե-

լացնում մկնդեղ: Այդ ամբողջը պետք ե այնպես լավ խառնել, վոր թույնը բոլորը մասնիկներին կպած լինի: Եթե գրավչանյութը լավ չի խառնված, այն ժամանակ վորոշ մասերում թույն ավելի շատ ե լինում, քան հարկավոր ե առնետի վոչնչացման համար, և նազգալով թույնի ներկատությունը՝ այդպիսի գրավչանյութը կարող ե չընդունել, իսկ մցուս մասերում թույն բոլորովին չի լինի կամ այնքան քիչ կլինի, վոր առնետին չի մեղցնի:

ԳՐԱՎՉԱՆՅՑՈՒԹԵՐԻ ՊԱՏՐԱՍՏԱՆ ԶԵՎԵՐԸ

1) 10 կիլո հացի փշրանքին՝ 1 կիլո շաքարավաղ, 1 կիլո բուսական յուղ և 1—2 կիլո մկնդեղ:

2) Մաքրած կարտոֆիլը խաշել և լավ արորել, այնպես, վոր կողտեր չմնան:

10 կիլո խաշած կարտոֆիլին՝ 1 կիլո բուսական յուղ և 1 կիլո մկնդեղ: Բոլորը լավ խառնել

3) Միաը կամ ձուկը մանր ծեծում են, կամ անցկացնում մսի մեքենայով և խառնում մկնդեղի հետ: 10 կիլո մսին՝ 1 կիլո մկնդեղ:


4) Թունավորած ջուր:

10 լիտր ջրին 500 գրամ մկնդեղ և 500 գրամ շաքար:

Յեռացրած ջրի մեջ լցնում են մկնդեղ ու շաքար և այնքան խառնում, մինչև վար լուծվի: Կատացվի մկնդեղի $50/0$ -ալին լուծվածք: Հոտի համար լավ կլինի ավելացնել միքիչ անխոն կամ տանձի հյութ (հսկնեցիա). մկներն այդ հոտը շատ են սիրում: Թունավոր ջուրը լցնում են փոքրիկ թասիկների մեջ և դնում այնպիսի տեղեր, վոր ընտանի կենդանիները և թունունները չկարողանան խմել:

Դրուղատեսական վասաւառուների դեմ մկնդեղով կռվելու վերաբերյալ բերված որինակներից բացի, պետք ե հիշատակել նաև մկնդեղային աղերի նշանակությունը հացահատիկների այնպիսի հիվանդությունների դեմ, վորոնք առաջանում են սունկերից:

Հացահատիկների կուլտուրաներն ամենից շատ վեասվառմ են մրիկից, վորը սաստիկ տարածված և ամենուրեք և իր պատճառած վասառվ տաղան տեղն ե բունում: Մրիկով վարակված ցանքերը հանախ $10-20\%$ -ով կորցնում են իրենց բերքը, իսկ վորոշ տարիներում առանձին շրջաններում այդ վասարը հասնում է $40-50\%$:



Նկ. 5. Սերմերի ախտահանման
հանման մեքենա:


Մրիկի գեմ կովելու համար սերմերը նախքան ցանելը ախտահանում են:

Թաղանթավոր հացահատիկները (զարի, վարսակ, կողեկ) բնթարկում են թաց ախտահանման, զորի զեպքում ցանքից անձիշագես առաջ սերմերը լվանում են ֆորմալինի լուծվածքի մեջ:

Ցորենն ու տաքեկաննախմ միայն յենթարկում են չոր ախտահանման, զորի զեպքում հատիկները փոշիանման թունավոր ախտահանիչներով փոշուում են:

Չոր ախտահանման առավելությունն այն և, վոր հատիկները կորելի յի վաղորոք ախտահանել, զրանից ծլունակությունը չի կորչի և, թացի զրանից, պաշտպանված կլինի պահեստալին զանազան վնասատուներից:

Բայց չոր ախտահանման զլխավոր առավելությունն այն և, վոր հասարավոր և լինումհատուկ մեքենաների միջոցով ախտահանել մեծ քանակությամբ սերմացու հատիկ Որինակ՝ ԱԲՎ. մեքենան (նկ. 5), վոր աշխատում ե երեկարական կամ փոքր տրակտորի ուժով, մի ժամկա ընթացքում ախտահանում և 15 առն հացահատիկ: Այդպիսի մեքենաները խոշոր կոլեկտիվ և խորհրդա-



Նկ. 6. Սերմերի ախտահանման
մեքենա՝ «Պարեզա»:

լին անտեսությունների համար անհրաժեշտ է: Փոքր կոլեկտիվ-ների համար կարուի լի և ոգտագործել կենինդրտի «Վուկան» գործարանի ձեռքի մեքենաները (նկ. 6):

Սյս մեքենաները մի ժամում ախտահանում են մինչև 0,5 տոնն հատիկ:

Վերջերս սերմերի ախտահանման համար գործադրվում են մկնդեղի աղերը՝ պարիզյան կանաչ, մկնդեղաթթվուտ ային նատրիոն, մկնդեղութթվական կիր:

Մկնդեղի արդ աղերը մեռցնում են մըիկի սաղմերը և, թացի դրանից, նպաստում են ծլունակությանը և բույսի անելուն:

Հատիկը մկնդեղով ախտահանելիս պետք է հիշել նրա թռունավոր հատկությունը և համապատասխան միջոցներ ձեռք առնել աշխատողներին պաշտպանելու հնարավոր թունավորումից: Պետք է աշխատել քամու ուղղությամբ, վորպեսզի թունավոր փոշին աշխատավորից հեռու փչվի: Քիթն ու բերանն անպատճան դիմակով (ուսուպիրատար) պաշտպանված պետք է լինեն (նկ. 7), վորը շնորհիվ գիմակի մեջ յեղած բամբակի թուլլ չի տալիս, վոր թռունավոր փոշին ընկնի կոկորդը:

Անհրաժեշտ է միքանի ժամից հետո բամբակը փոխեր

թացի դրանից, պետք և պահպանել բոլոր այն նախազգուշական միջոցները մկնդեղի և նրա աղերի հետ աշխատելիս, վորոնց մասին խօսվել և վերը:



Նկ. 7. Դիմակավ պաշտպանված
բանվոր:

ՄԿՆԴԵՂԸ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Մեղանից շատերի հիշողությունից դեռևս չեն վերացելի Խաբերիալիստական սպանդարանի սարսափները, վորտեղ վոչնչացման ամենառեղիք գենքերից մեկը հանդիսանում ելին քրմիական միջոցները: Այսոր կապիտալիստները վոչ միայն չեն հրաժարվել այդ հզորագույն գենքերից, այլև իրենց սոլոր ուժերը լորում են, վորպեսզի ավելի ուժեղացնեն այդ գենքը:

ՀԱՄՆ-ի զորքերի քիմիական ձևաբառության նախկին պետ գեներալ Ֆրաւալ իր «Քիմիական պատերազմ» գրքում ասում է. «Քիմիական պատերազմն ապագալում զոչ միայն պետք ե ճանաչվի բոլոր քաղաքակիրթ լերկիրների կողմից, այլև պետք ե դառնա այն միակ միջոց, վորով պետք ե ոգտվեն բրլոր քաղաքակիրթ ժողովուրդները թող աշխարհը գիտենա, վոր մենք գաղեր կողծածենք այն բոլոր զորքերի դեմ, վորոնք կալատերազմնն մեր դեմ, և վոր մենք յենթադրում ենք նրանցից ոգտվել մեր վարպետության ամենածայրահեղ սահմանների չափով»:

Կարելի յե չկասկածել, վոր «քաղաքակիրթ» մարդասպանների սպառնալիքները ճշտությամբ կողտազործվեն, իսկ նրանց «վարպետությունը», իրանց գիտությունն ու լաբորատորիաները հնարավոր ամեն բան կանեն, վորպեսզի այդ քիմիական պատերազմը լինի ամենազաժանն ու ամենաանազորուկնը: Յեվ ինթե ներկայում կապիտալիստներն արդեն արցունքարեր ու փոշտացնող ուժեր են կիրառում սեփական բանվորների դեմ պայքարելիս, գործադրելով դրանք գործադրություր բանվորների և դր-

ժաղուրկների դեմ, ապա կարելի յե հեշտությամբ զլիսի ընկնել, թե նրանք ինչ «անտկնկալ» ընծաներ են պատրաստում իսկ բանվորների ու կոլտնտեսականների համար:

Ահա թե ինչու գյուղատնտեսության քիմիացման հարցը, իսկ սոցիալիստական եկոնոմիկայի հիմքը կառուցելիս լինելով ամենահիմնականներից մեկը, միաժամանակ ամենազարկորներից մեկն և իբրևի պաշտպանուակությունը պատահովելու գործում:

ՄԿՆԴԵՂԸ այն քիմիական նյութերից մեկն ե, վորոնք մեծ նշանակություն ունեն վոչ միայն գյուղատնտեսության, այլև ուսումնական գործի մեջ: Գյուղատնտեսության մեջ նրա ունեցած նշանակությունը լուսաբանված ե առաջին գլխում: Հետագա եւ ջերը նկիրվուծ են ուսումնական գործում նրա ունեցած նշանակությանը ծանոթացնելուն:

**ԹՈՒՆԱՎՈՐ ՆՅՈՒԹԵՐ, ՎՈՐՈՆՑ ԲԱՂԱ-
ԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԿԱ ՄԿՆԴԵՂԸ**

ՄԿՆԴԵՂԸ պարունակող բազմատեսակ նյութերի թիվը հասնում է լեռեք և կես հազարի, ըստ վորում նրանցից շատերն (այս կամ այնչափով) ունեն թունավոր հատկություններ: Գերմանիան շատ մեծ աշխատանք ե կատարել մկնդեղի միացությունների հետազոտման գործում՝ նպատակ ունենալով դրանց միջից հայտաբերել թունավոր նյութեր: Գերմանիան իմպերիալիստական պատերազմի ժամանակ առաջինն այդ թուները գործադրեց կռվի դաշտում (1917. Նյուպորի մոտ): Այդ ուսումնասիրությունները գեռնու չեն վերջացել և ներկալում ամենալեռնուն կերպով շարունակվում են: Հյուսիսային Ամերիկայում նույնիսկ հիմնվել և ազգային կոմիտե, վորի անմիջական նպատակն ե՝ մկնդեղից ստանալ նոր թունավոր նյութեր և ուսումնատիրել նրանց: Անկանածածած, այդ ուղղությամբ դեռևս բոլոր հեարավորությունները չեն սպազործված: Մկնդեղի մի շարք միացություններից նոր թունավոր նյութեր ստանալը միանգամայն իրագործելի յե:

ՄԿՆԴԵՂԸ («Նկա», վաղուց հայտնի մրացություններից միքանիսը «ախուր» համբավավ) ունեն, այսինքն՝ իմպերալիստական պատերազմի ժամանակ փորձվել են կենդանի մարդկանց վրա:

Կենդանիների և մարդկանց որդանիզմի վրա ներգործելու տեսակեաից թունավոր նյութերն ըստ իրենց բնույթի լինում են կեղդող, արցունքաբեր, փոշտացնող, թունավորող և վերք առա-

Զաքնող. Ալսպիսով, ուրեմն, մկնդեղի միացությունները պիտումն բոլոր կարգի թռւակոր նյութերի մեջ:

Թաղմական գրականության մեջ հիշատակված 85 թռւակոր նյութերի ցանկից 17 ը պարունակում են մկնդեղ, վորը կազմում և ընդհանուր թվի 20%:

Բնական և, վորիրենց մեջ մկնդեղ պարունակով բոլոր նյալթերը չեն, վոր ուղական տեսակետից միտաեսակ են իրենց մարտական ուժով և նշանակությամբ: Վորպիսպի թռւակոր նյութեր (մկնդեղ պարունակող) ուղամական պայմաններում պիտանի լինեն, անհրաժեշտ են:

1) վոր հակառակորդը նրանց դժվարությամբ հալտաքերի, — այսինքն՝ ըստ հնարավորության չունենան գույն, հոտ, համ, վորպիսպի զանազան քիմիական միջոցներով դժվար հալտաքերվեն.

2) վոր նրանց չնչին քանակությունն անզամ ունենա չափազանց ուժեղ թռւակոր կամ բորբոքող համկություն և չափազանց արագ ներգործի:

3) վոր ալդ նյութերի արտադրությունը, փոխադրությունը, պահպանումը և գործածությունը ուղամական պայմաններում հարմար լինի:

4) վոր բոլոր պաշտպանված իրերի միջով և, առաջին հերթին, հակագաղերի և հագուստի միջով արագությամբ և հեշտությամբ ներս թափանցի:

5) վոր ապահոված լինի հումքով, եժան արտադրությամբ և հնարավոր լինի գործադրել խողաղ պայմաններում:

Մկնդեղի միացությունները կամ, ինչպես ուղմական քիմիայի մեջ ընդունված են ասել, արսինները, բավարարում են վերև հիշատակված պահանջների մեծագույն մասին և այն ել ամենազնահատելի պահանջին: Հակագաղերը շատ թուլ են կլանում արսինը Այս հատկությունը խիստ եյական և այն տեսակետից, վոր արսինով վարակված զի վորը, ցավ ու կոկիծ զգալով աշեքերում և մոմուռ՝ քի մեջ վորն առաջացնում են անզուսպ փոշտոց: Հարկադրված է ինում հանել հակագաղը, այդպիսով յենթարկելով իրեն իսկական կործանարար գաղեցությանը:

Հետևապես արսինը մեծ մասամբ գործածվում եր այլ թռւակոր նյութերի հետ խառն:

«ԿԱՊՈՒԻՑՏ ԽԱՉ»

Իմպերիալիստական պատերազմի ժամանակ գերմանացիք հակառակութի դիրքերը ամբակոծում ենին կապույտ խաչի նշաններ ունեցող արկերով: Այդ արկերն իրենց մեջ պարունակում ենին բացառապես արսին, ալսինքն, մկնդեղի այն միացություններից, վորոնք առաջ բերում տանջալի փոշտոց և հեշտությամբ թափանցում սովորական հակագաղի ֆիլտրի միջով: «Կապույտ խաչով» սմբակոծելը սովորաբար կատարվում եր հարձակման ժամանակ:

ԱՐՑԻՆՆԵՐԻ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ ՈՐԳԱՆԻՉԾՄԻ ՎՐԱ

Սրբիններն առաջին հերթին վասում են քթածակերի լորձունությը, առաջ բերելով անդուսակ փոշտոց, առաստ հոսանք քթից, բերանում առաջացնում մետաղլա համ ու փոխում: Արսիններից միքանիսն աղղում են շնչառության անցքերի (ինդող գող գագեր), աչքերի (արցունքաբեր) և կոշի (վերք առաջացնող) վրա: Արոինով թռւակորվելուց հետո առաջանում ե քնկություն, վերջավորությունների անզգայություն և փայտացում: Հետալյացում զարդանում ե երիտեմա (կաշվի բորբջում) և քոր, քայլ առանց բարիկներ առաջացնելու: Տաքության ուժեղ բարձրացում չի նկատվում, բայց հիվանդին տանջում ե փոխումը, հաղը, կակծի զգացումը, վոր առաջ ե բերում սաստիկ ծարավ և ախտամիզություն: Սովորաբար արմինով թռւակորվելը մահացու չեն, քայլ այդ որգանիզմում ծանր հետք ե թողնում, քայլքալելով պարդը:

Իմպերիալիստական պատերազմում գործածվեցին կամ պատրաստվեցին գործադրության համար մկնդեղ պարունակող 17 տարբեր գագեր: Մենք մանրամասն ծանոթանանք դրանցից մի քանիսին միայն, վորոնք ցույց են տվել թռւակորող և լավ մարտական հատկություններ:

ՑԵՐԵՔ ԲԼՈՐԱՅԻՆ ՄԿՆԴԵՂ ԿԱՄ ՄԿՆԴԵՂ ԲԼՈՐԻՒԹ

Թեև սա վորպիս ինքնուրուին թռւակորող նյութ պիտանի չեն, բայց և այնպիս ուղմամատիմիական գործում խոշոր նշա-

Նակություն և ստացել վորպես մի շարք թունավոր նյութեր լուծող և համեմատաբար լավ ծուխ տուաջացնող:

Միտառու նյութերը նրանք են, վորոնք ուումբը տաքանալիս կամ պաթելիս բաժանվում են աստիք մանր փշ անքների, մրանում են ողի հետ և կազմում ծխի խառնուրդ:

Խնչակն հայտնի է, կովի ճակատում ծխի ոգտագործումը նպատակ ունի կամ հակառակորդից թագնել իր գործողությունները և շարժումները, կամ թուլացնել հակառակորդի նշանառումների, գիպուկությունը Այս ծուխը, վորը գործադրվում է քողարկման համար, պետք ե լինի գրեթե անլուանգ, չպետք է լիսաօք մնանալն և փայտե իշերին, չփչացնի մթերքներն ու հագուստ, մի խոռ քով, մնու չնասցնի իր սեփական զորքին: Բայց ծուխն ունի և ուրիշ նշանակություն, այն ե՝ հակագագերի միջով և թունավորել: Դրա համար նա բաղկացած պետք ե լինի շափազանց մանր մասնիկներից և ունենա թույների բնորոշ հատկությունները: Աբդիսի թունավոր բարակ ծուխն ըստունակ և ողում լիրկարժամանակ մնալու, հեշտությամբ թափանցնու հակագագերի մի չով և բորբոքում առաջացնելու:

Միտառու նյութերով սովորաբար լցնում են ուումբերը, հրանոթի տրկերը, ականները կամ պատրաստում են թունավոր մոմեր:

Քլորային մկնդեղը գործածվումն քողարկման համար, վորպես ինքնուրության ծխարեր նյութ, իսկ վորպիս թույն՝ խառնում են այլ նյութերի հետ:

Հայտնի «վենսենիտոը» վոր իմպերիալիստական պատերազմի ժամանակ ֆրանսիացիք գործածում ելիդ թնդանոթի արկերը լցնելու համար, իր մեջ պարունակում եր ցիտնջրածնական թըթքուու (СИНИЛЬНАЯ КИСЛОТА), քլորոֆորմ և մկնդեղլորիդ:

Անկասկած, ապագա պատերազմի ժամանակ նույնպես մկնդեղլորիդն իւ արժեքը չի կորցնի, և անավանդ վոր նա հանդիսանում է այն հում նյութը, վորից պատրաստում են ուրիշ, աշվելի կարեւոր, ուղարկան տեսակետից ավելի թունավոր նյութեր:

Մկնդեղլորիդ ստանալու միքանի միջոցներ կան: Ամենապարզ միջոցը շոր քլոր գազի ներգործությունն և մոխրագույն մկնդեղի վրա, բայց վերջինիս թանգության և սակագություն պատճառով այլ միջոցը գործնական նշանակություն չունի:

Մկնդեղլորիդը տեխնիկական ստանում են աղաթթվուտով աղդելով սպիտակ մկնդեղի վրա:

Քիմիական այդ գործողության ժամանակ, վորպես կ'զմնակի նյութ, ստացվում է ջուր, վորը զուրս քաշելու համար ավելացնում են ծծմբաթթու: Նույն իթե աղաթթվի փոխարուն ոգտը վենք քլորջրածնով, վորը մի շարք քիմիական ճառագերում կազմակերպություն գալիք չտվով եժան պիլի: Իր քիմիկական հատկությամբ մկնդեղլորիդը հանդիսանում է անգույն յուղանման հեղուկ, վորը գրությա 18° ցած չերմաքթյան տակ պայտանում եւ Տեսակարար կշիռը հավասար է 2,15-ի, այսինքն՝ նույնից ըստ ջրից բավականաչափ ծանր եւ Զրի ազդեցության տակ մկնդեղլորիդը տարրաւուծվում է իր բարադրիչ մասերին՝ սպիտակ մկնդեղի և քլորջրածնալին թթվուտի:

Դիֆենիլ-բլուր-ԱՐՍԻՆ

Այս նյութն ստացել է մարտական ուժեղ գազի հոչակ, վորովինետ ողում նրա ամենաաննշան քանակությունն անդամ (1 մասը 500 հազար մաս ողում) առաջ է բերում փաշտոց, արտասուզ և վերջավորությունների փալտացում:

Ուժեղ թունավորման դեպքում են քլորոֆորմով, վորը ներշնչելիս ժամանակավոր թեթեություն է պտաճառում, բժշկում են նաև կաթով, վորի հետ խառնում են մագնեղիա: Դիֆենիլ-քլոր-արսինն ոգտագործվում եր վորպիս «թունավոր ծուխ», վորի համար նա ոգտագործվում եր փշանքավոր քիմիական ուումբերում և թունավոր ծխարձաններում: Ռումերի պայթութից հետո մանր մասնիկները (դիֆենիլ արսինի ծուխը) աղատ կերպով թափանցում են հակագագերի միջով: Ռումբերում դիֆենիլ-քլոր-արսինը հաճախ զործ է ածվում ֆոսգենի հատ խառն, վորը չափազանց ուժեղ թունավոր գազ եւ: Գերմանիան սովորական նույնականացների համար շատ լայն կերպով եր ոգտագործում զիֆենիլ քլոր-արսինը և իր գործարաններում պատրաստում եր հաղարավոր առնեներով, այդ նավատակով վերտկաղմելով և ոգտագործելով նիրկի գործարանները:

Ֆրանսիան իսուանդուն կերպով պատրաստում եր թե զիֆենիլ քլոր-արսին և թե ֆենիլ դիքլոր-արսին: Այս ինքնիւն նույն ել իրենց հատկությամբ միմյանց մոտ են:

Իր քիմիկական հատկությամբ դիֆենիլ-քլոր-արսինը մաքուր զրությամբ անգույն, բլուրելիստանման զանգված եւ, վորը հալվում է 44 աստիճանով: Զուբը նրան չի քայլայում:

Դիմունիլ-քլոր-արսինի արտադրությունը շատ բարդ է, ուստի և թանգ եւ:

Դիմունիլցիան-արսինը բյուրեղանման, թափանցիկ նյութ է, վորը պատերազմի ժամանակ գործ եւ ածվաւմ գորպես թունավոր և փոշացնող գազ: Այս արտադրությունն ավելի թանգ եւ:

ԱԴԱՄՍԻՏ ԿԾՄ ՖԵՆԱՐՍԱԴԻՆ-ՔԼԱՐԻԴ

Այս նյութը հայտաբեր լած եւ պատերազմի ժամանակ, 1918 թվին և ադամսիդ անունն ստացել եւ ամերիկացի Ադամս քիմիկոսի անունով, վորը մշակել եւ դրա ստացման միջոցը: Ադամսիտի արտադրությունն անհամեմատ պարզ եւ նրա ռազմական նշանակությունը նույնպես խիստ մեծ է: Այսպես, Ադամսիտի մեկ մասը 30.000 մաս ողը գարձնում եւ շնչառության համար միանգամայն անտանելի: Ադամսիտ պատրաստելու համար իրրե հում նյութ ծառայում են մինդեղ-քլորիդը և գիֆենիլամինը: Այս վերջինս խոշոր նշանակություն ունի ներկերի արդյունաբերության մջի: Քիմիական մոքուր ադամսիտը բյուրեղանման նյութ է, քիչ գեղին ավուն, 190⁰—194⁰ ջերմությամբ հալվող: Ռազմական գործում ազամսիտը գործ եւ ածվում ռումբերի մեջ լցնելու համար: Ռումբը պայթելի, աշամսիտը փշրվում եւ սաստիկ մանր մասերի, վորն ընդունակ եւ պնորող ժամանակ մնալու ոդում եւ հեղառությամբ թափանցելու հակագազերի միջով:

Ադամսիտէ գնահատելի հատկությունն այն է, վոր նա մըթնողութային տեղումներից չի ազդվում, վորի հետևանքով ադամսիտի ոմքակութելու վերկար ժամանակ անանցանելի յեղանակ:

Լյուիսիտը կամ «մահվան ցողը» (քլորինիլ-դիքլոր-արսին) յերեաց իմպերիալիստական պատերազմի վերջերին: Լյուիսիտի անունով ռազմակիմիայում հայտնի յեն յերեք նյութ: Լյուիսիտի մեջ, բացի մինդեղից, մասնում են նաև քլոր, ածխածին և ջրածին: Բոլոր յերեք նյութերն ել իրենց թունավոր հատկությումը նման են միմյանց: Լյուիսիտի հալտարերումը վերագրում են իրենց թե անզինացիք և թե ամերիկացիք: Նույնիսկ ասում են, թե զերմանացիք ել աշխատել են այդ նյութի վրա: Համենայն շեպս, այդ ռազմական նյութի հայտարերման «պատիվը» պետք եւ վերագրել ամերիկացի գնդապետ Լյուիսին (վորի անունով կոչվում եւ լիտիտ): Այն փաստը, վոր ռազմական թունա-

գոր գազը հայտաբերված է կաթոլիկական համալսարանի պատերի մեջ, ապացուցում է կրոնի՝ իմպերիալիստական նպատակներին ծառայելու հանգամանքը: Դրանով ապացուցվում է, վոր բոլոր գունին և ազգության կղերականները միշտ ել հանդիսացնել են կապիտալիստներին պաշտպան և ողնական, այսինքն՝ բանվոր դասակարգի թշնամի:

Լյուիսիտի հայտաբերումից հետո արտասահմանյան բոլոր յրագրերը նկարագրեցին այդ նյութը վորպես ամենառածեղ և ամենավանդակոր մարտական գազ: Ամերիկական գեներալ Ֆրայսը, վորի մասին վերը խոսեցինք, լուսիսիտն անվանեց «մահվան ցող», վորովհետեւ նա գտնում եր, վոր ռազմական եւ 50 մեծ սավանակ բեռնավորված լուսիսիտի ոռումբերով, վորպեսզի վոչընչացվի այնպիսի քաղաք, ինչպիսին եւ նյութորկը իր բազմամիւն ազգաբնակությամբ:

Ցեթե մի կաթիլ լյուիսիտ քսենք առնետի վորին, 2—3 ժամից հետո կատկի, իսկ 3 կաթիլը մահ կպատճառի միքանի բրուկերից հետո:

«Մահվան ցողով» շաղ տված հողը միքանի տարի կկորցնի բուսականություն ծեցնելու կարողությունը: Այդ պատճառով մեծ քանակությամբ լուսիսիտ գործածելով կտրելի կլինի ամալացնել ծաղկած բնակելի վայրեր:

Ինաւկե, լուսիսիտի զարնուրելի ուժին վերաբերող բոլոր այս չափազանցը ած «խոսակցությունները» նպատակ ունեցին բարձրացնել այս նյութի անունը, վորպեսզի սարսափ, խուճապառած հակառակորդի մեջ:

Նկատի ունենալով, վոր լուսիսիտը դեռևս կռվի դաշտում չեր ստուգված, դժվար եւ դատել, թե վորքան ճշմարիտ են ամերիկացի գեներալների յինթագրությունները: Համենայն դեպք, զանգան լաբորատորիաներում կատարած աշխատանքներն առացցուցեցին, վոր սա մինչև որս գործ թուն ունեցաղ ամսնից ուժեղ և վասնգավոր զաղերից եւ, վորը տեղի լի տալիս միայն «մարտական գազերի արքա» իպրիտին:

Լյուիսիտի մարտական ուժն այն է, վոր նա թափանցում եւ հագուստի և հակագազի միջով, չկորցնելով իր թունավոր հատկությունները և քայլքայլում եւ գոչ մլայն կաշին, այլև ներգործում եւ վորպես խեղդող թունավոր գազ: Պետք եւ հիշատակել են այն, վոր այդ գազը պնդանում է միայն շատ ցածր ջերմությամբ, հետեհապես կարելի յե գործածել և ձմեռը: Գրեթե հոտ չունի և

ալդ պատճառով գժվաբ և հոտով իմանալ նրա ներկայությունը:

Այսիսիտն ունի մառախուզ (ողի մեջ ցըլած նրա նեղուկի հանք մասնիկները) առաջացնելու հատկություն. Կուխիսիտի մառախուզը վարակում և տվյալ վարը և յերկար ժամանակ դարձնում և անանցանելի: Բնինելով կաշվի վրա, առաջ և բերում տեղական բորբոքում, թարախակալում, վերք և, բացի դրանից, կաշվի միջով ընկնելով արյան մեջ, արյան բարակ յերակներն այնքան և լայնացնում, վոր սասափիկ խանգարում և սրտի գործողությանը, վորով և, ըստ յերեսութիւն, բացատրվում և թունավորվածի շուտափութ մահը:

Կուխիսիտի թհրությունը, վորպես մարտական գաղ, հանդիսանում և նրա արտադրության թանգությունը և պահելը, ինչպես և նրա համեմատաբար հեշտ գնդակացիան (գեզացացիա կոչվում և թունավոր նյութերն անվտանգ դարձնելու լեզանտեկը): Կուխիսիտի գեզացացիան լավագույն միջոց և համարվում արկաթն (սուրածի լուծվածք, աւազոն և ալին):

Իր ֆիզիկական հատկությամբ լյուխիսիտը անգույն կամ քիչ ընդհանուր նեղուկ և չյուր նյութը (մեխանիկական) ունի ավելի սուր գույներ, վորը կախված և նրա մեջ գտնվող խառնուրդից (սկսած կարմիր գույնից մինչեւ սեղ):

Յեռացնելիս լյուխիսիտը տարրալուծվում և իր բաղադրիչ մասերին, շոտ լավ լուծվում և բնազոլի նավթի, սպիրտի մեջ և ալին: Զրի մեջ չի լուծվում, բայց և այնպես ջրի ազդեցության տակ քիմիական միջու չփոփոխվում և, կամ ինչպես առում են՝ չի բնիթարկվում:

Անկասած և, վոր ապագա պատերազմին լյուխիսիտը կողտազորվի խոշոր քանակությամբ, գլխավորապես, ըստ յերեսութիւն, սովորական ներքին լինելով հակառակորդի կինդանի ուժերի վրա: Բայց, նկատի ունենալով, վոր ներկայիս հակազարերը բավարար շափով պաշտպանում են լյուխիսիտից և գտնված են նրա հեշտ գեզացիանի միջոցները, գեներալ ֆրայիսի խուճապ ուսացնող գուշակումները լիովին շեն արդարանա:

* Պոչ մի գաղ սարսափելի չե, յեթե կա հակագաղ և քիմիական կարգապահություն:

ՄԻՆԳԵԴԱՅԻՆ ԶՐԱԾԻՆ

Իմպերիալիստները խոշոր հույսեր ելին տածում մկնդեղային ջրածնի վերաբերմամբ, վորի ուսումնասիրությանը ըստ են գնա-

ցել միքանի զիտնական քիմիկուներ: Սա անդուն գաղ և, զրեթե առանց հոտի և ունի ուժեղ թույների հատկությունները: Նրանցանակությունն այն և, վոր նա հակառակորդին կարող և անակնկալի բերել քանի վոր նրան վոչ հոտով և, վոչ եւ գույնով հայտարերել չի կարելի:

Մկնդեղային ջրածինն ազգում և արյան վրա, լուծելով արյան կարմիր գնդիկները: Արյան թունավորման հնտեանքով սկսվում և լարգի անկանոն ախտատանք և լեղին ատրածվում և ամբողջ մաքմանի մեջ, գեղին գույն տալով կաշվին և աչքերի սպիտակուցին (դեղնախտ):

Ուժեղ թունավորման ժամանակ մեղը արյանախտն և դառնում:

ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գրողատնտեսության սոցիալիստական վերակառուցումը, վորն ընթանում և նորագույն տեխնիկայի գործադրումով և լայնորեն կիրառելով քիմիան, ինչպես և մեր յերկրի պաշտպանունակության ամրացման շահերը պահանջում են քիմիական արդյունաբերության ուժգին զարգացում:

Մկնդեղի արդյունաբերությունը, ինչպես ընթերցողը համոզվեց այս գրքունիքի ընթերցումից, խոշոր զեր և խաղում թե գյուղատնտեսությանը հսկայական կորուստներ պատճառող վատառուների գեմ կովի միջոցներն ապահովելու և թե ռազմական գործում:

Մեր յերկրի ժողովրդական տնտեսությունը տարեցտարի ավելացնելու և իր պահանջը քիմիական արդյունաբերական նյութերի նկատմամբ: Մկնդեղի և նրա միացությունների պահանջն այդ ուղղությամբ ամեն տարի պետք և ամի և այդ պահանջը պետք և իր ժամանակին և լրիվ բազարարվի: Մեր խաղաղասիրական քաղաքականությունը յերեք չի նշանակում, վոր անուշաղը պետք և մատնել ընդհանրապես յերկրի ռազմական պաշտպանության գործի ուժեղացումը և մասնավորական քիմիական պաշտպանությունը, Մկնդեղի արդյունաբերությունը, վորպես քիմիական արդյունաբերության հիմնական ճյուղերից մեկը, անհրաժեշտ և ուժեղ թափով զարգացնելու, իսկ զրա համար պետք և փնտուել մկնդեղի հումքի նոր աղբյուրներ և վորքան կարելի յեւ շուտ ազատվել արտասահմանից ներմուծելու անհրաժեշտությունից: Մինչդեռ պետք և ասել, վոր մեզ սու՛ ԽՀՀ-ում

մինչեւ զերջերս մկնդեղի արգլունաբերությունը գտնվել է սաղմալին վիճակում:

Մինչալատերազման շրջանում մկնդեղալին միացություների տարեկան արտադրությունը միքանի, տասնյակ տոննից չի անցել: Իմպերիալիստական պատերազմի ժամանակ Ռուսաստանի գործարաններում մկնդեղ ստանալու փորձերը շուտով կանգ առան հում նոյն թերի բազայի կորսուան պատճառով (հանքերն անցան Տաճկաստանին): Նա զիլսավորապես ներմուծվում է արտասահմանից, մեծ մասամբ Գերմանիայից:

Այդ ներմուծման շափը լերևում է հետեւալ աղյուսակից:

ՄԿՆԴԵՂԻ ՆԵՐՄՈՒԾՈՒՄԸ (ՏՊՆՆԵՐՈՎ)

ՄԿՆԴԵՂԻ ՄԻԹԱԳՈՐՅՈՒՆԻՒԹԻ ԱԲՆԱԼԻՆԵՐ	1925/26թ.	1926/27 թ.	1927/28 թ.
ՄԿՆԴԵՂԱՅԹՎՈՒՄԱՅԻՆ ՆԱՏՐԻՈՆ	376,1	295,4	248,0
> ԿԵՐ	18,0	0,3	54,0
> ԿԱՍՊԱՐ	19,1	48,5	48,0
ԴԱՐԲՈՂՋԱՆ ԿԱՆԱՉ	173,0	160,7	172,2
ՄԿՆԴԵՂԻ ԱՅլ ՄԻԹԱԳՈՐՅՈՒՆՆԵՐ	19,1	48,5	48,0

Հնդկակառակը, մենք պետք են պատրաստվենք ջախջախիչ հականարված տալու համաշխարհային բորժուազիային, վորը փորձում է զենքի ուժով խանդարել մեր սոցիտիստական շինարարությունը: Մեր կապիտալիստական հարեանների ուղղմական անընդհատ պատրաստությունները, սրանց անհավանական ծախսերը սպառազինության և մասնավորապես քիմիական հարձակման միջոցների արտադրության վրա, ուղղված են ամենից առաջ Խորհրդային Միության դեմ: Այդ տեսակետից մեր պարաստ լինելը կվորոշվի նույնպես և քիմիական արգլունաբերության դրությունից:

Թեև մկնդեղի ինքնուրույն հանքեր թե մեղ մոտ և թե արտասահմանում համեմատաբար շատ կան, բայց շահագործման համար շատ քչերն են ձեռնաու, մշակված հանքերը չեն:

զլսավորապես ստացվում են մետաղի հանքերի մշակումից, վորպես կողմանակի նյութ:

Մետալաբդյունաբերական գործարանների ծխից (վորն իր մեջ պարունակում են մկնդեղ) մկնդեղ պատրաստելու հարցը պետք է գործնականում լուծվի նաև մեղ մոտ:

Արժեքավոր ծխներն ողի մեջ բաց թողնելու փաստը, չխօսելով արդեն նրանց թունավոր լինելու մասին, ինքնին անթուցաբելի չե, և այդ գրոնտում կորուստների գեմ կավելու համար պետք են մղել վճռական պայմանը:


Այդ ճանապարհով ստացված մկնդեղի ամեն մի տոննը, մեր կոլտնտեսություններին, խորհանասություններին կտա տասնյակ հաշարավոր տանն ավելորդ հաց՝ փրկված մասաւունների ճանհերից, վոչ միայն կիսայի կոլտնտեսականի ժամանակին ու աշկերից, այլև խորհրդային վոսկի ոռոքին (վալուաման):

Ալնուհետեւ մենք պետք են անպամտն շարունակենք և ար պայմանը մկնդեղի շահագործման համար պիտանի նոր հանքերի հայտաբերումը, պայմանով, վոր հետապա հնդամկակին ժողովրդական անտեսությանը տանք անհրաժեշտ քահակությամբ մշնկան միացությունը առաջ անդամակի սոցիալիստական պեղային միացություններ, արդարիսով նպաստենք սոցիալիստական գյուղատնտեսության մասաւունների գեմ կովելու գործին և ամբացնենք մեր լերկրի պաշտպանուակությունը:

ԲՈՎԱԿԱԿԱԿՈՒԹՅՈՒՆ

49

Ներածություն	3
Ի՞նչպիսի մասամբուների դեմ կարելի լի կովել մկնդեղով	7
Ներքին ներգործության ինսեկտիսիդները և նրանց գործադրությունը մասամբուների դեմ կովելիս	8
Սրսկման գլխավոր կանոնները	12
Գրավչանլութերի պատրաստման եղանակը	17
ՄԿՆԴԵՂԸ ԱԱԶՄԱԿԱՆ ԳԱՐԾՈՒՄ	
Թունավոր նյութեր, գորոնց բաղադրության մեջ կտ մկնդեղ	25
Կտպույտ խաչ	27
Արսինների ներգործությունն որգանիզմի վրա	27
Յերկաքլորակին մկնդեղ կամ մկնդեղթորթ	27
Դիֆենիլ-քլոր-արսին	29
Աղամսիտ կամ ֆենորսադին-քլորիդ	30
Մկնդեղալին ջրածին	32
Ցեղակացություն	33



Բանկեթեր և Լեմատեր

WPIMPRK E CECILGROW XOSARNCBE
N B BOEHHN DEPE

90
1933
ՏԵՂՄԱՆԻ



Ազգային գրադարան
ՀՀ

NL0280451

18130

ԿՐԵ 40 ԿՋՊ. (2¹/₄ մ.)



Բիրկոնգեյմ և Գերշատեր
**ՄԵՇՔՅԱԿ Վ ԸՆԼԾԿՈՒՅՑ ԽՈԶԱՅՏՑԵՎ
և Վ ՅՈՒՆՆՈՒՄ ԴԵԼԵ**

Գոսիազատ ՀՀ Արմենիա
Էրևան—1932